ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Սերծավան համայնք
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1
Հեռախոս (0231) 6-00-25
Էլ. փոստ merdzavan.armavir@mta.gov.am

03.10.2016թ.
թիվ 192

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Մ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2016 թվականի սեպտեմբեր ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 5 /հինգ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

1 սեպտեմբերի 2016 թվականի N57-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ

ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N65-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N65-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝ 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5112 հոդվածով նախատեսված գումարից 400 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5122 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 1
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

23 սեպտեմբերի 2016 թվականի N58-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎՈՒԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի առաջին և 6-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, որոշում եմ.

1.2016 թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 14:00 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանում անցկացնել աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1/ Հրանտուհի Գևորգյանի, գլխավոր մասնագետ /ծածկագիր2.3-1/ Սոնա Ավետիսյանի, առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-2/ Աշոտ Գրիգորյանի և առաջին կարգի մասնագետ /ծածկագիր3.2-1/ Սուսաննա Այվազյանի հերթական ատեստավորումը:

2.2016 թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 16:00 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանում անցկացնել աշխատակազմի համայնքային ծառայողներ, 2-րդ կարգի մասնագետներ՝ /ծածկագիր3.3-1/ Նարինե Դավթյանի և / ծածկագիր3.3-2/ Անյուտա Սաֆարյանի հերթական ատեստավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 23

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

23 սեպտեմբերի 2016 թվականի N59-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին>> N12-Ն հրամանի N1 և N2 հավելվածների 8-րդ կետն, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել համայնապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-1/ Սուսաննա Դավթյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 23

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 սեպտեմբերի 2016թվականի N10-Ա

ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ և 164-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հրանտուհի Գևորգյանի 2016 թվականի սեպտեմբերի 28-ին ներկայացրած դիմումը, կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հրանտուհի Գևորգյանին /ծածկագիր 1.2-1/ տրամադրել ընթացիկ տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2016 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 3-ը ներառյալ, 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն, 4 աշխատանքային օր՝ լրացուցիչ/:

2. Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի նոյեմբերի 4-ին:

3. Հրանտուհի Գևորգյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, նրա լիազորությունների իրականացումը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-1/ Սոնա Ավետիսյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 29

ք. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

29 սեպտեմբերի 2016թվականի N11-Ա

ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 160-րդ, 163-րդ և 169-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1599-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով <<Մերծավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի 2016 թվականի սեպտեմբերի 28-ին ներկայացրած դիմումը, **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերծավան համայնքի <<Մերծավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանին տրամադրել ընթացիկ տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները՝ 2016 թվականի հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ, 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն, 5 աշխատանքային օր՝ լրացուցիչ/:
2. Գայանե Սարգսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների իրականացումը վերապահել <<Մերծավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ դաշնակահար Կարինե Մարգարյանին:
3. Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի նոյեմբերի 7-ին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅԱՆ

2016 թվականի սեպտեմբերի 29

գ. Մերծավան